մէջ մանիֆաթուրայի առաջին կանոնաւոր տունը, որ ի վերջէ ձեռնարկեց նաև սեղանաւորական ընդարձակ գործառնութեանց և գորգի խորհրդաւո՛ր տուրևառնեբու՝ ամուր և բարեկշռեալ հիմերու վրայ, ինչպէս պիտի գրենք իր կարգին։

Այս միջոցին կը փայլէր նաև Ճէզայիրլեան Մկրտիչ՝ մեծ դրամատէր և մաքսային ու պետական ուրիշ գործերու յանձնառու, որուն՝ պերճամոլ և արձակաբարոյ կենցաղը չո՛ւտ նուաղեցուց և նուաղեցուց զինքն իր բարձրութիւններէն։

Նախայիշեալ վաճառականներուն հիներէն մէկ քանին և հին սեղանաւորներէն մաս մը՝ 1839ին յատուկ դրամագլխով (9 բեռ և 49131 ղրշ.) բերել տուած էին Լոնտրայէն, Պարոն Լըմուան վաճառականին ձեռքով, Էսերի Թիճարէք անուն նաւ մը և սկսած ալ էին բանեցունել զայն՝ մանաւանդ Սեւ Ծովի նաւահանգիստները։ Նաւը դժբաղդաբար վտանգեցաւ Սամսունի առջև, և որովհետեւ ապահովագրուած էր 12000 լիրայի՝ կարճ դատավարութենէ մը ետք առին փոխարէնը։ Ասոր նման ըրած են դարձեալ՝ ժամանակին հարուստներն՝ առեւտրական մեծ ձեռնարկներ, ինչպէս իրենցմէ քանի մը հոգի Շիրքէթ-ի-Խայրիյէի սկզբնաւորական գործողութեանց և հաստատութեանն իսկ բաժնեկից եղած են։ Այս վերջիններէն էր Ըէսիմի Հաճի Մկրտիչ Խալֆան՝ ծնած Կեսարիայի յայնժամու միակ հայախօս Մանճուսուն գիւղը, որ և 100ամեայ կնքեց իր գործն և խոհեմ կեանքն Սկիւտար Իճատիյէ՝ 1899ին։

Ասոնցմէ քիչ առաջ դարձեալ՝ Կ. Պոլիսի ջոջ հարուստներէն խաւմբ մը՝ համախոհութեամբ իրարու հետ և համահաճութեամբ Պետութեան, հիմնած էր այն հրակայ ընկերութիւնը սեղանաւորական, որ՝ հակառակ իր